# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ-ԲԾ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/01 » ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 17 » հունվարի 2018թ.

Ժամը՝ 11 ⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Թովմասյան

Անդամներ՝ Ս. Անանյան

Վ. Թովմասյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,

1.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,

1.3. Հանձնաժողովի ընդունած որոշումները:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

**Ընդունել ի գիտություն:**

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հունվարի 11-ին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հունվարի 16-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, համաձայն որի մասնակիցը բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

## 3. Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

**Ընդունել ի գիտություն:**

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հունվարի 11-ին Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ապրանքների ամբողջական նկարագրերի վերաբերյալ տեղեկությունները:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:.

## 4. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

4.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/01 » ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

4.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը,

4.3. Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով, անգործության ժամկետի ավարտից հետո, «Ֆլեշ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Մ. Թովմասյան

Անդամներ՝ ____________ Ս. Անանյան

____________ Վ. Թովմասյան

Քարտուղար՝ ____________ Հ. Ավետիսյան